Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ու Մ

Հարգելի Հայտատուներ,

Ի պատասխան № TIIG-03 «Մեքենաների և սարքավորումների գնում համայնքների համար» մրցույթի վերաբերյալ 17.06.2019թ. Armeps համակարգով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

1. Հարց՝ Վերնագիր. «Մասնակցության իրավունքի մասին տեղեկատվություն»
Հարգելի գործընկերներ ուսումնասիրելով՝ մեքենաների և սարքավորումների գնում համայնքների համար սոցիալական ներդրումների տեղական զարգացման թիվ՝ TIIG-03 ծրագիրը խնդրում ենք տրամադրել մեզ հրավերի անգլերեն կամ ռուսերեն տարբերակը:
Կամ համապատասխան տեխնիկական մասնագրերի անգլերեն կամ ռուսերեն տարբերակը:

Պատասխան՝ Համաձայն «Մեքենաների և սարքավորումների գնում համայնքների համար» № TIIG-03 ծածկագրով մրցութային փաթեթի Հայտաթերթ II Բաժնի ՑՀ 10.1 կետի հայտի լեզուն հայերենն է:

2. Հարց՝ Մրցույթի էլեկտրոնային կառուցվածքի լոտերի տեխնիկական չափորոշիչների բաժնում առկա է "Գնացուցակ և կատարման ժամանակացույց" փաստաթղի ներբեռնման դաշտ: Մրցույթային փաստաթղթում բացակայում է նշված վերնագրով ձևաթուղթ: Առկա է միայն "Գնացուցակ" վեռնագրով ձև, որի համար տեխնիկական չափորոշիչներում կա առանձին ներբեռման դաշտ:
Խնդրում եմ պարզաբանել թե ի՞նչ է ներառում "Գնացուցակ և կատարման ժամանակացույց" փաստաթուղթը և համաձայն ի՞նչ ձևաթղթի է հարկավոր այն լրացնել:

Պատասխան՝ Մրցութային փաթեթի armeps համակարգի կառուցվածքում նշված «Գնացուցակ» և «Գնացուցակ և կատարման ժամանակացույց» չափորոշիչների դիմաց կցել Մրցութային փաթեթով սահմանված միևնույն «Գնացուցակ» ձևաթուղթը:

3. Հարց՝ Խնդրում եմ պարզաբանել թե ի՞նչ չափանիշներով են գնահատվելու ներկայացվող փաստաթղթերում առկա ապրանքների նմանատիպ լինելը: Այսինքն, ինչպիսի՞ գնային կամ որակային չափանիշների պետք է համապատասղանեն վերջին երեք տարվա մեջ հաջողությամբ մատակարարված ապրանքները, որպեսզի համարվեն նմանատիպ:

Պատասխան՝ Ապրանքների նմանատիպ պայմանագրերի պահանջը ներկայացված է սույն մրցութային փաթեթի ՄԱՍ 2-ի III Բաժնի «Գնահատման և Որակավորման չափանիշներ» 2-րդ կետի «Որակավորում» 2.1 ենթակետի «Որակավորմանն ուղղված պահանջներ» «Փորձ և տեխնիկական կարողություն» (ii) կետում:

4. Հարց՝ Խնդրում եմ պարզաբանել, թե ի՞նչ կերպ է հարկավոր հաստատել ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային ձևով։ Դրանք հնարավո՞ր է ներկայացնել լիազորված անձի էլեկտրոնային ստորագրությամբ, թե հարկավոր է ստորագրել և կնքել, այնուհետև ներբեռնել սկանավորված տարբերակները։

Պատասխան՝ Ներկայացված հայտերն ընդունվում են և՛ գրիչով և կնիքով հաստատված տարբերակով, և՛/կամ էլեկտրոնային ստորագրությամբ։

Հարց՝ Համաձայն մրցույթային փաստաթղթի հայտերի պատրաստման 10.1 կետի՝ Կցված փաստաթղթերը և տպված գրականությունը, որոնք Հայտի մաս են կազմում, կարող են ներկայացվել այլ լեզվով այն դեպքում, երբ դրանց կից ներկայացվում է համապատասխան պարբերությունների ճշգրիտ թարգմանություն։
Խնդրում եմ պարզաբանել, արդյո՞ք հարկավոր է թարգմանության նոտարական վավերացում։

Պատասխան՝
Համաձայն մրցույթային փաստաթղթի հայտերի պատրաստման 10.1 կետի նոտարական թարգմանություն չի պահանջվում։

Հարգանքով,

Ռոզա Դանիելյան
№ TIIG-03 մրցույթի քարտուղար
ՀՏԶՀ

20 հունիսի 2019թ.